ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» փետրվարի 2018 թվականի N 52-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 14-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին» թիվ 49-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Էլյա Արտեմի Շահգելդովային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 07-057-0338-0016 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունները՝ մառանը և բաց պատշգամբը, համարել օրինական»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 19
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» փետրվարի 2018 թվականի N 53-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 49-Ա, ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 50-Ա ԵՎ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 52-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Էլյա Արտեմի Շահգելդովայի (ծնված՝ 1949 թվականի հունիսի 9-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 07-057-0338-0016 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորում (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման N 2738545 վկայականը, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2010 թվականի դեկտեմբերի 21-ին և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի փետրվարի 8-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Էլյա Արտեմի Շահգելդովան սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 07-057-0338-0016 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորում 2003 թվականին ինքնակամ կառուցել է արտադրական նշանակության շինություններ՝ մառան 20,02 քառ.մետր և բաց պատշգամբ 8,12 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի բ) ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9, 19, 21 և 22-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի N 498 որոշման 2-րդ կետի բ) ենթակետի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Էլյա Արտեմի Շահգելդովային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 07-057-0338-0016 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորում ինքնակամ կառուցված արտադրական նշանակության շինությունների՝ մառանի և բաց պատշգամբի, պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Էլյա Արտեմի Շահգելդովային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 07-057-0338-0016 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողակտորում ինքնակամ կառուցված արտադրական նշանակության շինությունները՝ մառանը և բաց պատշգամբը, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 109 746 (մեկ հարյուր ինը հազար յոթ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 14-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին» թիվ 49-Ա, փետրվարի 16-ի «Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 14-ի թիվ 49-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 50-Ա, փետրվարի 19-ի «Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 14-ի թիվ 49-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 52-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 19
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» փետրվարի 2018 թվականի N 54-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գայանե Ալեքսանի Բաբայանին, 2018 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 49 հասցեում:

2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Գայանե Ալեքսանի Բաբայանին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունը հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» փետրվարի 2018 թվականի N 55-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Տիգրան Արտաշեսի Մանկուլյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 50-րդ փողոցի թիվ 19 հասցեի տնամերձ հողակտորում նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան և ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» փետրվարի 2018 թվականի N 56-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Նվարդ Էդուարդի Խաչատրյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Նվարդ Էդուարդի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 1 հասցեից բաժանված 1,89714 հեկտար մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Լուսավորության փողոց, թիվ 1, 3,32286 հեկտար մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Լուսավորության փողոց, թիվ 1/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» փետրվարի 2018 թվականի N 57-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արշակ Արմենակի Կուլիջանյանի (ծնված՝ 1953 թվականի հուլիսի 19-ին), Շողիկ Ղազարոսի Կուլիջանյանի (ծնված՝ 1953 թվականի հոկտեմբերի 20-ին), Խաչիկ Արշակի Կուլիջանյանի (ծնված՝ 1981 թվականի հուլիսի 4-ին), Արթուր Արշակի Կուլիջանյանի (ծնված՝ 1984 թվականի հունվարի 20-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով ընտանիքին պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 12-րդ փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման N 520137 վկայականը, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2003 թվականի մարտի 25-ին և անհատ ձեռնարկատեր Էդվարդ Միլիտոսյանի կողմից 2018 թվականի փետրվարի 12-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Էդվարդ Միլիտոսյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արշակ, Շողիկ, Խաչիկ և Արթուր Կուլիջանյանները ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 12-րդ փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում 2013 թվականին ինքնակամ կառուցել են բնակելի տուն՝ 132,0 քառ.մետր, կիսանկուղ՝ 132,0 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 10,0 քառ.մետր և պարիսպ՝ 5,5 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արշակ, Շողիկ, Խաչիկ և Արթուր Կուլիջանյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 12-րդ փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Արշակ, Շողիկ, Խաչիկ և Արթուր Կուլիջանյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 12-րդ փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105214218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 238 478 (երկու հարյուր երեսունութ հազար չորս հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» փետրվարի 2018 թվականի N 58-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 40-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:

2. Հաստատել Ջրվեժ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Ջրվեժ համայնքի ղեկավարին կից «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման» խորհրդակցական մարմնի անդամ Անահիտ Մարգարյանին:

4. Հանձնարարել Անահիտ Մարգարյանին՝ համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական զարգացման ծրագրում տեղադրել Ջրվեժ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար.

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 21
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2018 թվականի
փետրվարի 21-ի N 58-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Ջրվեժի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2018 թվականի փետրվարի 21-ից մինչև մարտի 7-ը ներառյալ կազմակերպվող Ջրվեժ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Ջրվեժ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2018 թվականի մարտի 7-ը ներառյալ ուղարկվել jrvezh.kotayq@mta.gov.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Ջրվեժի համայնքապետարան:

Հանրային քննարկումների ընթացքում 2018 թվականի մարտի 12-ին ժամը 16:00-ին Մելքոնյան փողոցի թիվ 76 հասցեում գտնվող Ջրվեժի համայնքապետարանի վարչական շենքի երկրորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2018 թվականի մարտի 2-ը ներառյալ ներկայացնել դիմում:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010-644929 հեռախոսահամարով:

Ջրվեժի համայնքապետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» փետրվարի 2018 թվականի N 59-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Աշոտ Բահադրյանի (ծնված՝ 1962 թվականի հունվարի 23-ին) լիազոր ներկայացուցիչ Խաչիկ Վահեի Դեմիրչյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Աշոտ Բահադրյանին պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի 6-րդ թաղամասի թիվ 3 հասցեի հողամասում (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21112017-07-0003, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2017 թվականի նոյեմբերի 21-ին, լիազորագիր, տրված 2016 թվականի սեպտեմբերի 28-ին, «ԱԼԲԻՌԱՖ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի փետրվարի 1-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԱԼԲԻՌԱՖ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Աշոտ Բահադրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի 6-րդ թաղամասի թիվ 3 հասցեի հողամասում 2009 թվականին ինքնակամ կառուցվել են շինություններ՝ առաջին հարկում այգետնակ 106,4 քառ.մետր և աստիճանահարթակ՝ 9,4 քառ.մետր, երկրորդ հարկում այգետնակ 106,4 քառ.մետր և հարթակ՝ 6,3 քառ.մետր, կիսանկուղ այգետնակ՝ 107,4 քառ.մետր, աստիճան՝ 1,0 քառ.մետր, հենապատ՝ 1,0 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Աշոտ Բահադրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի 6-րդ թաղամասի թիվ 3 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Աշոտ Բահադրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի 6-րդ թաղամասի թիվ 3 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 876 460 (ութ հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 22
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» փետրվարի 2018 թվականի N 60-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Լևոն Գևորգի Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 19-րդ փողոցի թիվ 44 հասցեի տնամերձ հողակտորում տալ երկհարկանի բնակելի տան և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն:

2. Պարտավորեցնել Լևոն Գևորգի Սաֆարյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 23
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» փետրվարի 2018 թվականի N 61-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Միքայել Ռազմիկի Վարդազարյանի լիազոր ներկայացուցիչ Վարդան Սամվելի Պողոսյանի (հիմք՝ լիազորագիր, տրված 2018 թվականի հունվարի 22-ին, անհատ ձեռնարկատեր Վալերի Գալստյանի կողմից 2013 թվականի հունվարի 25-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) դիմումը՝ Ջրվեժ համայնքի 1-ին փողոցի թիվ 1/81 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 45,1 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում Միքայել Ռազմիկի Վարդազարյանի կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 45,1 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակն իրեն օտարելու մասին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 և 35-րդ կետերով, ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժի 1-ին փողոցի թիվ 1/81 հասցեում գտնվող բնակավայրի բնակելի կառուցապատման 45,1 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 45,1 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակն օտարել կառույցն իրականացրած Միքայել Ռազմիկի Վարդազարյանին:

2. Պարտավորեցնել Միքայել Ռազմիկի Վարդազարյանին՝ մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 204 033 (երկու հարյուր չորս հազար երեսուներեք), ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 117 260 (մեկ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Լիազորել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքելու անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

4. Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 23
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» փետրվարի 2018 թվականի N 62-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Վահագն Սարիբեկյանի, Սաթենիկ Մարկոսյանի և Արմեն Փահլավունու խնդրանքը, ***որոշում եմ.***

Վահագն Սարիբեկյանին, Սաթենիկ Մարկոսյանին և Արմեն Փահլավունուն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 42-րդ փողոցի թիվ 8 հասցեից բաժանված առանձնացված մաս N 1-ին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 42-րդ փողոց, թիվ 8/1, մնացորդային մասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 42-րդ փողոց, թիվ 8:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 23
գ. Ջրվեժ